— Ես քեզ դարձեալ կը ստակացնե՛մ, դու իմ ձեռքից չե՛ս պրծնի, — ասաց քրդուհին, որի գեղեցիկ, սեւորակ աչքերը նոյն րոպէում ընդունել էին գազանի աչքերի նմանութիւն:

Մարօն ոչինչ չասաց, նա այնքան վրդովուած էր, որ խօսել չէր կարողանում: Նա պատասխանեց իր արհամարհական նայուածքով:

Քրդուհին աւելի գեղեցիկ է իր կատաղութեան րոպէում. նրա հոգին եւ արտաքին կերպարանքը կազմակերպում են այն ժամանակ մի ամբողջ պատկեր, որի մէջ նա երեւում է իր բոլոր քաջազնական բնաւորութեամբ:

Ես չէի կարող առանց համակրութեան նայել լեռների այն ազատ դստեր վրայ, թէեւ մի րոպէ առաջ նա ուզում էր սպանել Մարօին:

— Ինչո՞ւ էիր սպանում այս աղջկան, — հարցրի ես քրդուհիից:

— Դու չգիտես, աղա, — նա ինձ համարում էր թուրք, — ինչպէ՛ս սատանայ է այս աղջիկը, կասես թէ ֆըլայ (հայի նախատական կոչումը քրդի լեզուում) չլինի. նա համարձակւում է ձեռքը բարձրացնել իմ վրայ. մի օր ուզում էր խեղդել ինձ: Ո՞ր հայը այսպէս կանէ:

— Հայը ի՞նչ է, որ չկարողանայ այսպէս անել:

— Հայը շո՛ւն է, հէնց որ հաչէ, գլխին խփի՛ր, ձէնը կը կտրէ...

Արիւնը վազեց դէպի իմ գլուխը, ձեռքերս դողացին: Բայց ի՞նչ մեղ ունէր քրդուհին, երբ անարգում էր մի ազգութիւն, որ ինքն իր ստորութեամբ առիթ էր տուել իր մասին կազմել մի այսպիսի վատ կարծիք...

Բայց Մարօն համբերել չկարողացաւ. նա կրկին յարձակուեցաւ քրդուհու վրայ եւ մի հարուածով գլորեց նրան գետին: Ես դժուարութեամբ կարողացայ ազատել նրա ճանկերից ու սակաւ կատաղած զոհը:

— Թո՛ղ տուր խեղդեմ դրան, — ասում էր Մարօն:

— Շո՛ւն, — գոռում էր քրդուհին:

Այն ժամանակ միայն նկատեցի, որ Մարօի ձեռքից արիւն էր հոսում: Երբ առաջին անգամ քրդուհու բազուկը բռնած, նա աշխատում էր խլել նրանից դանակը, մատը վիրաւորել էր, եւ իր խռովութեան մէջ չէր զգում ցաւը: Ես ուզեցի փաթաթել վէրքը, բայց նա թող չտուեց, ասելով, թէ ինքն եւս կարող է փաթաթել: Նա մօտեցաւ աղբիւրին, սկսեց սառն ջրով լուանալ արիւնը:

Քրդուհին գցեց իր ուսին մի տոպրակ, որի մէջ դրած էր մի գառն, եւ իր քայլերն ուղղեց դէպի գիւղը:

— Ու՞ր ես տանում այս գառը, — հարցրի նրանից: